

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

## ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) «Մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ավետիք Սահակյանի, ով գործում է ինստիտուտի Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), ի դեմս ռեկտոր Արտուշ Դուկասյանի, ով գործում է ԳՊՀ-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ապահովման, կարևոր նշանակություն ունեցող ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ երկկողմ հետաքրքրությունները, գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման, առաջավոր գիտական փորձի ներդրման անհրաժեշտությունը ուսումնական գործընթացում, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

### 1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

### 2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գիտահետազոտական և կրթական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ-ում և ԳՊՀ-ում իրականացվող գիտական և կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ գիտական և կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում,

բ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,  
գ/ համատեղ գիտահետազոտական, կրթական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում, հետազոտությունների արդյունքների հրատարակում.

- մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,
- Կողմերի կազմակերպած կրթական, գիտական, մշակութային ծրագրերին և այլ միջոցառումներին մասնակցություն,

դ/ գիտական և կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,

ե/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում, ակադեմիական շարժունության իրականացում,

զ/ մասնագիտական կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով, ուսումնաարտադրական պրակտիկաների համատեղ կազմակերպում և ղեկավարում,

է/ ինստիտուտի առաջատար մասնագետների ներգրավում ԳՊՀ-ում իրականացվող ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարման, գրախոսման, պաշտպանության աշխատանքներին,

ը/ գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում:

### **3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

3.1. Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2. Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/ նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների մասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

#### 4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

- 4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:  
4.2. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:

#### 5. Եզրափակիչ դրույթներ

- 5.1. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:  
5.2. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

#### 6. Կողմերի իրավաբանական հասցեները

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի  
Ինստիտուտ ՊՈԱԿ  
Հասցե՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24 բ,  
Էլ. Հասցե՝ mechins.sci.am  
Հեռ.՝ +374 10 524890  
Տնօրենի պաշտոնակատար

Ավետիս Սահակյան

Կ.Տ.

« 29 » 01 2020թ.

Գորիսի պետական համալսարան  
ՊՈԱԿ  
Հասցե՝ ք. Գորիս, Ավանգարդ 2  
Էլ. Փոստ՝ gorissu@mail.ru  
Հեռ.՝ +374 0284 2 27 67

Ռեկտոր

Սրտուշ Ղուկասյան

Կ.Տ.

« 29 » 01 2020թ.

